ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի

14.04.2023թ. արձանագրությամբ

«ՍԳԿԿ» ԻԿ
Դիտորդ խորհրդի նախագահ
Ա. Չիտչյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Ընդհանուր ժողովի

20.05.2023թ. թիվ 1 որոշմամբ

«ՍԳԿԿ» ԻԿ
Դիտորդ խորհրդի նախագահ
Ա. Չիտչյան

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Նոր խմբագրությամբ

Հայաստանի Հանրապետություն
քաղաք Երևան

2023թ.

ՆԱԽԱԲԱՆ

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) Վարքագծի կանոնագիրքը (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) մշակված և կազմված է ՀՀ օրենսդրության, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի, կազմակերպության Կանոնադրության և ներքին իրավական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Վարքագծի կանոնագիրքը նպատակ ունի ապահովել Կազմակերպության անդամների ընդհանուր շահերը, կարգավորել Կազմակերպության և դրա անդամների փոխհարաբերությունները, ինչպես նաև Կազմակերպության անդամների և սնանկության վարույթի կողմ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետական լիազոր մարմնի փոխհարաբերությունները:

Կազմակերպության բոլոր անդամները իրենց գործունեությունն իրականացնելիս պարտավոր են առաջնորդվել սույն Կանոնագրքով և պահպանել սահմանված բոլոր կանոնները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1.Սնանկության գործով կառավարիչը իր գործունեությունն իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել ՀՀ օրենսդրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿ-ի կանոնադրությամբ, սույն Կանոնագրքի կանոններով և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով, ինչպես նաև պետական լիազոր մարմնի հրամաններով և կանոնակարգերով:

Սնանկության գործով կառավարչի մասնագիտական գործունեությունը սնանկության վարույթների իրականացումն է, որի գործառույթները սահմանված են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

Կառավարիչը իր լիազորությունները իրականացնում է դատարանի կողմից կայացված համապատասխան որոշումների հիման վրա:

1.2.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է լինել «ՍԳԿԿ» ԻԿ-ի անդամ:

1.3.Սնանկության գործով կառավարչի գործունեությունն իրականացվում է անկախության, օբյեկտիվության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների

հիման վրա:

Իրենց լիազորություններն իրականացնելիս սնանկության գործով կառավարիչները անկախ են և ղեկավարվում են օրենքով, մասնավորապես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

1.4.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է կատարել ՀՀ օրենսդրությամբ և «Սնանկության մասին» ՀՀ օրենքով կառավարչին առաջադրվող բոլոր պահանջները:

1.5.Սնանկության գործով կառավարիչը «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացնում է պարտապանի օրենքով սահմանված շահերը:

1.6.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է օբյեկտիվորեն գնահատել է ստեղծված իրավիճակները և իրական փաստերը, թույլ չտալ, որպեսզի կողմնակալությունը կամ որևէ կողմնակի ճնշում ազդեն իր կողմից կայացված եզրակացությունների, որոշումների կամ գործողությունների վրա, որը կհանգեցնի անկախության, օբյեկտիվության, բարեխղճության և ողջամտության սկզբունքների խախտման:

1.7.Սնանկության գործով կառավարիչը մասնակցելով սնանկության վարույթին, աջակցում է արդարադատության իրականացմանը, կազմում է եզրակացություններ, ընդունում է որոշումներ, իր գործողություններն իրականացնում է միայն պատշաճ տեղեկատվության ապահովման միջոցով:

1.8.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է իր գործառույթները իրականացնել բարեխղճորեն և արդյունավետ:

1.9.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է կողմերին պարզաբանել սնանկության գործընթացի բնույթը և էությունը, ինչպես նաև ապահովել հարգալից և անկողմնակալ վերաբերմունք գործարար սովորույթներին համապատասխան պարտապանի և պարտատերերի նկատմամբ:

1.10.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր գործառույթներով նպաստելու և ողջամիտ ժամկետում սնանկության վարույթն ավարտելու նպատակով:

1.11.Սնանկության գործով կառավարիչը պետք է ձեռնարկի միջոցներ պարտապանի վնասներ կրելու ռիսկը հնարավորինս նվազեցնելու նպատակով:

1.12.Սնանկության գործով կառավարիչը պետք է ունենա համապատասխան գիտելիքներ ու տիրապետի սնանկության վարույթի մասնագիտական հմտություններին, մշտապես հետևի օրենսդրական փոփոխություններին և իր մասնագիտական որակավորման բարելավմանը:

1.13.Սնանկության գործով կառավարիչը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է անձամբ կատարել իր գործառույթները, դրանք չեն կարող փոխանցվել այլ անձանց:

1.14.Սնանկության վարույթն իրականացնելիս սնանկության գործով կառավարիչը իրավասու չէ համատեղել իր մասնագիտական գործունեությունը այլ գործունեության հետ, որը կարող է ազդել նրա կողմից կայացվող որոշումների անկախության և օբյեկտիվության վրա:

1.15.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է պահպանել ինչպես պարտապանի անձնական տվյալների, այնպես էլ սնանկության վարույթի գաղտնիությունը: Կառավարիչը պարտավոր է պահպանել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այնպիսի տեղեկատվության գաղտնիությունը, որն իրեն հայտնի է դարձել իր գործառույթներն իրականացնելիս:

1.16.Կազմակերպության աշխատանքները արդյունավետ դարձնելու նպատակով կառավարիչը պարտավոր է ժամանակին իրականացնել Կազմակերպության կանոնադրությամբ և ներքին իրավական փաստաթղթերով հաստատված վճարները:

1.17.Սնանկության գործով կառավարչի վարձատրության կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

1.18.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ապահովել պարտատերերի ժողովի պատշաճ կազմակերպումը և անցկացումը:

1.19.Սնանկության գործով կառավարիչը չի կարող անձամբ ձեռք բերել պարտապանի գույքը և պարտապանի հանդեպ ունեցած պահանջի իրավունքը:

1.20.Սնանկության գործով կառավարիչը չի կարող անձնական նպատակներով

օգտագործել կազմակերպության ֆինանսական, նյութատեխնիկական և տեղեկատվական միջոցները, ինչպես նաև ծառայողական գաղտնիքը:

1.21.Իր գործառույթները իրականացնելիս սնանկության գործով կառավարիչը պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգը, պատշաճ կերպով հարկային մարմիններին ներկայացնել համապատասխան հաշվետվություններ, ինչպես նաև կազմակերպել իր իրականացրած սնանկության վարույթների փաստաթղթերի արխիվացումը:

1.22.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու պարտապանի գույքի պահպանությունը:

1.23.Եթե պարտապանի գույքի պահպանումը պատշաճ չի կատարվում, սնանկության գործով կառավարիչը պարտավոր է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կիրառելու գույքի պահպանման լրացուցիչ միջոցներ:

1.24.Պարտապանի գույքային դրության ուսումնասիրման համար սնանկության գործով կառավարիչը պարտավոր է օգտագործել գույքագրման արդյունքում ձեռք բերված ֆինանսական տվյալները:

1.25.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ պարտապանին պատկանող, սակայն երրորդ անձանց տիրապետության տակ գտնվող գույքը վերադարձնելու ուղղությամբ:

Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է իրականացնել հետևյալ գործառույթները՝

- պարտապանի գույքային դրությունը պարզելու և տեղեկատվություն ստանալու նպատակով հարցումներ կատարել համապատասխան մարմիններին,
- հաշվապահական հաշվետվությունների ստուգման և գույքագրման արդյունքում տարբերությունների /տարաձայնությունների/ հայտնաբերման դեպքերում բացահայտել անհամապատասխանության պատճառները, ձեռնարկել միջոցներ գույքի վերադարձման ուղղությամբ,
- անհրաժեշտության դեպքում վերականգնել անշարժ գույքի

փաստաթղթերը, կատարել չափերի և բաժանումների ճշգրտումներ և իրականացնել հայտնաբերված գույքի պետական գրանցում,

- սահմանված կարգով հայց ներկայացնել ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելու և վնասների հատուցման պահանջով:

1.26.Պարտապանի սնանկության վարույթը իրականացնելիս սնանկության գործով կառավարիչը պարտավոր է օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կատարել ֆինանսական վերլուծություն, ստուգել սնանկության պատճառների, այդ թվում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայությունը:

1.27.Սնանկության գործով կառավարիչը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է դատարաններ՝ պարտապանի մասնակցությամբ կատարված գործարքները անվավեր կամ առոչինչ ճանաչելու պահանջով, եթե դրանք կատարվել են ՀՀ օրենսդրության և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

1.28.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել դեբիտորական պարտքերի հավաքագրմանման, ինչպես նաև պարտապանի գույքի հայտնաբերման և վաճառելու ուղղությամբ:

1.29.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել տեղեկություններ դատարանի կողմից կայացված որոշումների և իր կողմից կազմակերպված աճուրդների վերաբերյալ:

1.30.Սնանկության գործով կառավարիչը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է հրավիրել պարտատերերի ժողով և նախագահել այն:

1.31.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել հարկային վճարումները, բարեխղճորեն կատարել պետական լիազոր մարմնի պահանջներով սահմանված պարտադիր վճարները:

1.32.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է նպաստել «ՍԳԿԿ» ԻԿ-ի և կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը և հեղինակության բարձրացմանը:

1.33. Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս Կառավարիչը

պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել կառավարչի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել սնանկության գործի վրա: Կառավարիչը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի երրորդ անձանց գոհացնելու համար: Կառավարիչը պարտավոր է նաև անկախ լինել պարտապանից:

2. Սնանկության գործով կառավարչի և սնանկության վարույթի մասնակիցների փոխհարաբերությունները

2.1.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է խուսափել այնպիսի գործողությունների իրականացումից, որոնք խախտում են սնանկության վարույթի մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերը:

2.2.Սնանկության գործով կառավարիչը ՀՀ օրենսդրությամբ և «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պարտավոր է ապահովել պարտատերերի ժողովի անցկացումը: Կառավարիչը պարտատերերի առաջին ժողովի անցկացման ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցում է ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին և պարտապանին:

2.3.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ և «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական՝ www.azdarar.am կայքում հրապարակել տեղեկատվություն պարտապանի սնանկության վերաբերյալ, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ:

2.4.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սնանկության վարույթի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները փակցնել դատարանի շենքում, հատուկ հատկացված տեղում:

2.5.Սնանկության գործով կառավարիչը իրավունք չունի խոչընդոտել պարտապանի բնականոն գործունեությանը մինչև լուծարային գործընթացի սկսելը,

սակայն նշված ժամանակահատվածում պարտապանը իր գործունեությունը իրականացնում է բացառապես կառավարչի հսկողությամբ:

2.6.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ պարտապանի գույքի պահպանությունը ապահովելու, այլ անձանց տիրապետության տակ գտնվող գույքը հայտնաբերելու և վերադարձնելու ուղղությամբ:

3.Պարտապանի գույքը վաճառելու կառավարչի իրավունքը

3.1.Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո, մինչև վերջինիս վերաբերյալ դատարանի կողմից լուծարելու մասին որոշում կայացնելը, պարտապանը գործում է սնանկության գործով կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո:

3.2.Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը՝ վերջինիս լուծարման մասին դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո իրականացնում է սնանկության գործով կառավարիչը:

3.3.Պարտապանի լուծարման մասին դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո՝ կառավարչը իրավունք ունի պարտապանին պատկանող գույքը ներկայացնելու անկախ փորձագետին՝ գնահատման նպատակով:

3.4.Պարտապանի գույքի վաճառքը կազմակերպելու համար սնանկության գործով կառավարիչը ապահովում է իր կողմից իրականացված գործարքների հրապարակայնությունն ու մատչելիությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակում է համապատասխան տեղեկություններ կայացվելիք աճուրդների վայրի, ժամանակի և իրականացման կարգի մասին:

3.5.Կառավարչի կողմից պարտապանին պատկանող գույքը կարող է օտարվել նաև ուղղակի գործարքի միջոցով՝ դատարանի համապատասխան որոշման հիման վրա, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4. Սնանկության գործով կառավարչի և այլ մասնագիտացված կազմակերպությունների մասնագետների փոխհարաբերությունները

4.1.Սնանկության գործով կառավարիչը իր գործառույթների պատշաճ կատարումը ապահովելու նպատակով կարող է ներգրավել համապատասխան մասնագետների կամ մասնագիտացված կազմակերպությունների, ինչպես նաև այլ աշխատակիցների, նրանց հետ կնքել օրենսդրության պահանջներին համապատասխան պայմանագրեր և վարձատրել պարտապանի հաշվին:

5. Սնանկության գործով կառավարչի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

5.1.Կառավարիչը և «ՍԳԿԿ» ԻԿ-ն պարտավոր են մինչև հաշվետու տարվան հաջորդող մարտի 1-ը՝ իրենց գործունեության վերաբերյալ վիճակագրական բնույթի տարեկան հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

5.2.Կառավարչի կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ կառավարչի կողմից վարվող գործերի, դրանց քանակի, այդ թվում՝ ֆինանսական առողջացման դեպքերի, ֆինանսական վերլուծությամբ իր կողմից հայտնաբերված կեղծ և կանխամտածված սնանկության հատկանիշների, իր աշխատավայրի և աշխատակիցների վերաբերյալ, ինչպես նաև այլ վիճակագրական տեղեկատվություն:

5.3.Կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից ներկայացվող հաշվետվությունը պետք է ներառի տեղեկություններ կազմակերպության կողմից հարուցված կարգապահական վարույթների, անցկացվող վերապատրաստումների, անդամների թվի և անդամների տվյալների վերաբերյալ:

5.4.Սույն գլխով նախատեսված հաշվետվությունների ձևերը և ներկայացման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

6. Սնանկության գործով կառավարչի նշանակումը և նրա կողմից սնանկության վարույթի իրականացումը

6.1.Սնանկության գործով կառավարիչը չպետք է ստանձնի սնանկության վարույթի կատարումը, եթե նրա մոտ առկա են կասկածներ իր մասնագիտական որակավորման վերաբերյալ և բացակայում է տվյալ գործով իր գործառույթները հաջողությամբ իրականացնելու և սնանկության վարույթը ավարտելու վստահությունը:

6.2.Սնանկության գործով կառավարիչը չպետք է ստանձնի որևէ սնանկության վարույթի իրականացումը, եթե նրա մոտ առկա են իր անաչառության և անկողմնակալության վերաբերյալ հիմնավորված կասկածներ կամ նրա կարծիքով անաչառ դիտորդի մոտ կարող է առաջանալ նրա անաչառության և/կամ կողմնակալության վերաբերյալ կասկածներ:

6.3.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է սնանկության գործը քննող դատարանին հայտնել այնպիսի փաստերի վերաբերյալ, որոնք կարող են ազդել իր անկողմնակալության վրա: Այդպիսիք են՝

- սնանկության վարույթի մասնակիցների հետ ազգակցական կապերը,
- սնանկության վարույթի ընթացքում պարտապանի նկատմամբ վերահսկողություն իրականացնող և այլ շահագրգիռ անձանց հետ հարաբերությունները,
- սնանկության վարույթի մասնակիցների հետ գործարար կապերի առկայությունը,
- պարտապանի նկատմամբ վերջին երեք տարվա ընթացքում ղեկավարման աշխատանքների կատարումը կամ որևէ վճարովի աշխատանքների իրականացումը,
- շահագրգռվածության այլ հիմքերը:

Սույն հանգամանքների առկայության դեպքում սնանկության գործով կառավարիչը պարտավոր է հայտնել նաև այնպիսի դեպքերում, երբ դրանք ի հայտ են եկել ինչպես իր նշանակման, այնպես էլ գործառույթները իրականացնելու ընթացքում:

6.4. Կառավարիչը բացահայտելով, որ նույն պարտապանի վերաբերյալ առկա է մեկ այլ սնանկության գործ և նշանակված է մեկ այլ ժամանակավոր կառավարիչ պետք է հրաժարվի սնանկության գործով ժամանակավոր կառավարչի թեկնածու հանդես գալու

վերաբերյալ համաձայնություն տալուց:

7.Կազմակերպության և սնանկության գործով կառավարչի փոխհարաբերությունները

7.1.Կազմակերպությունն ապահովում է սնանկության գործով կառավարչի կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

7.2.Սնանկության գործով կառավարիչը անհապաղ և պատշաճ կերպով իրազեկում է Կազմակերպության համապատասխան մարմիններին սնանկության վարույթն իրականացնելու ժամանակ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում ներկայացնում է այդ հանգամանքները հաստատող փաստաթղթեր:

7.3.Սնանկության գործով կառավարիչը Կազմակերպության համապատասխան մարմիններին տրամադրում է ճշգրիտ և անհրաժեշտ տեղեկատվություն իր դատավարական կարգավիճակի փոփոխությունների վերաբերյալ:

Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է Կազմակերպության մարմիններին իրազեկել այնպիսի հանգամանքների վերաբերյալ, որոնց հետևանքով վերջինս կարող է չհամապատասխանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված սնանկության գործով կառավարչին առաջադրվող պահանջներին:

Կառավարիչը իր գործառույթները չի կարող իրականացնել կամ պարտավոր է դրանք դադարեցնել, եթե

- օրինական ուժի մեջ է մտել կառավարչի նկատմամբ մեղադրական դատավճիռը, որով վերջինս դատապարտվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի,
- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված կարգով հանդիսանում է փոխկապակցված անձ պարտատերերի կամ պարտապանի նկատմամբ,
- օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացրել իրեն սնանկ ճանաչելու

վերաբերյալ,

- դատարանի վճռով ճանաչվել է սնանկ,
- սնանկության գործով կառավարչի որակավորումը դադարեցվել է կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով զրկվել է որոշակի ղեկավար պաշտոններ զբաղեցնելու և իրավաբանական անձանց կառավարում իրականացնելու իրավունքից:

7.4.Սնանկության գործով կառավարիչները պարտավոր են նպաստել Կազմակերպության գործունեության թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը:

7.5.Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է միջոցներ ձեռնարկել իր և Կազմակերպության հեղինակության բարձրացման ուղղությամբ, չիրականացնել որևէ գործունեություն, որը վնաս կպատճառի Կազմակերպության կամ նրա անդամների գործարար համբավին:

7.6.Կազմակերպության անդամների, ինչպես նաև որևէ կառավարչի և Կազմակերպության միջև վեճի ծագման դեպքում կողմերը պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները այն կարգավորելու ուղղությամբ: Վեճը չկարգավորվելու դեպքում կողմերը այն ներկայացնում են կարգապահական հանձնաժողովի քննարկմանը:

7.7.Եթե մասնագիտական գործունեությունն իրականացնելիս սնանկության գործով կառավարչի մոտ առաջանում են բարդ իրավական, տեխնիկական կամ տնտեսական հարցեր, նա կարող է խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել Կազմակերպության համապատասխան մարմիններին:

7.8.Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս սնանկության գործով կառավարիչը պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ, սույն Կանոնագրքով և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված բոլոր պահանջները:

7.9.Այն սնանկության գործով կառավարիչը, ով պատշաճ կերպով չի ներկայացնում պահանջնող հաշվետվությունները, չի կատարում Կազմակերպության կողմից հաստատված անդամության և այլ վճարները, ինչպես նաև Կազմակերպության

կանոնադրությամբ, ներքին իրավական փաստաթղթերով և սույն Կանոնագրքով հաստատված պահանջները, ենթարկվում է կարգապահական պատասխանատվության:

7.10.Այն դեպքերում, երբ Կազմակերպության համապատասխան մարմինները հայտնաբերում են որևէ սնանկության գործով կառավարչի կողմից Կազմակերպության կանոնադրությամբ, ներքին իրավական փաստաթղթերով և սույն Կանոնագրքով հաստատված պահանջների խախտում, իր լիազորությունների չարաշահում կամ ոչ պատշաճ իրականացում, պատշաճ կերպով տեղեկացնում են կառավարչին այդպիսի խախտումների վերաբերյալ և պահանջում վերացնել դրանք: Ներկայացված պահանջը չկատարելու դեպքում կառավարչի նկատմամբ կիրառվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Սնանկության գործով կառավարիչը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ իրավախախտումը հայտնաբերելուց ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում, իսկ շարունակական խախտման դեպքում՝ այն հայտնաբերելուց երեք տարվա ընթացքում:

Կառավարչի նկատմամբ նախազգուշացում, նկատողություն և խիստ նկատողություն կիրառվելուց հետո համապատասխանաբար երեք ամսվա, վեց ամսվա և մեկ տարվա ընթացքում կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում կառավարիչը համարվում է կարգապահական տույժ չունեցող:

7.11.Անդամակցության դադարեցման դեպքում սնանկության գործով կառավարիչը պարտավոր է գրավոր դիմում ներկայացնել Կազմակերպության համապատասխան մարմնին, ներկայացնել իր գործունեության հաշվետվությունները, ինչպես նաև Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով հաստատված անդամակցության և այլ վճարները հավաստող փաստաթղթերը:

7.12. Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերից մեկում պարտապանի անունով բացում է սնանկության հատուկ հաշիվ և դրան է հաշվեգրում պարտապանի անունով ստացվող բոլոր դրամական միջոցները:

7.13.Կարգապահական խախտում կատարելու համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելը համարվում է դիտավորությամբ կատարված կարգապահական խախտում:

7.14.Սնանկության գործով կառավարչի անդամակցության դադարեցումը իրականացվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի, Կազմակերպության կանոնադրության և ներքին իրավական փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան:

Սնանկության գործով կառավարչի անդամակցությունը կարող է դադարեցվել միայն սահմանված կարգով կարգապահական վարույթների և նրա դրսևորած վարքագծի նկատմամբ ստացված բողոքների քննարկումը ավարտելուց հետո:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1.Սույն Կանոնագիրքը հետադարձ ուժ չունի:

8.2.Սնանկության գործով կառավարիչը կարող է Կանոնագրքի կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկվել միայն Կանոնագրքի ուժի մեջ մտնելու պահից հետո կատարած արարքի համար:

8.3.Կանոնագրքի մեկնաբանման իրավունքը վերապահված է Դիտորդ խորհրդին:

8.4.Դիտորդ խորհուրդը պարտավոր է ապահովել Վարքագծի կանոնների միատեսակ կիրառումը:

Դիտորդ խորհուրդը կարող է իր նախորդ դիրքորոշումը փոխել իրավունքի զարգացման նկատառումներից ելնելով: Այդպիսի դեպքերում Դիտորդ խորհուրդը պետք է ծանրակշիռ հիմնավորումներ ներկայացնի նախորդ դիրքորոշումը փոխելու անհրաժեշտության վերաբերյալ:

8.5.Սույն Կանոնագրքի կանոնների կիրառումը ապահովում է «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» Կարգը:

8.6.Սույն Կանոնագիրքն ուժի մեջ է մտնում Ընդհանուր ժողովի կողմից

հաստատելու պահից:

8.7.Սույն Կանոնագիրքը ուժի մեջ մտնելու պահից՝ 27.05.2017թ. Ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրությամբ հաստատված «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության «Սնանկության գործով կառավարչի վարքագծի» կանոնագիրքը համարվում է ուժը կորցրած: